ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 08-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

քաղաք Երևան **«08» փետրվարի 2024թ.**

2024 թվականի փետրվարի 08-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) Կառավարման խորհրդի (այսուհետ՝ ԿԽ) հերթական նիստը՝ հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով:

Օրակարգում ընդգրկված հարցերին վերաբերող համապատասխան նյութերը սահմանված ժամկետում ներկայացվել են Կառավարման խորհրդի անդամների էլեկտրոնային հասցեներին:

Օրակարգում ընդգրկված են հետևյալ հարցերը.

1. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի տարեկան հաշվետության քննարկում և հաստատում.
2. ՔՏՀԱ տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 3-րդ եռամսյակի հաշվետվության ներկայացում և քննարկում.
3. ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատման նախագծի քննարկում և հաստատում.

Քվեարկությանը մասնակցեցին՝

Գ. Սանոսյան – ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար (խորհրդի նախագահ),

Կ. Ցուցուլյան – ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ – փրկարար ծառայության տնօրեն,

Ա. Դանիելյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ,

Ա. Հարությունյան – ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,

Ա. Ավանեսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ,

Դ. Գրիգորյան – Քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ,

Ս. Թովմասյան – Կադաստրի կոմիտեի ղեկավար,

Տ. Քեյան – «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի ներկայացուցիչ,

Տ. Բաբայան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության» ներկայացուցիչ (համաձայնությամբ),

Դ. Սողոմոնյան - «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի հողաշինարարություն և հողային կադաստրի ամբիոնի ասիստենտ, համալսարանի գիտական խորհրդի անդամ, տեխնիկական գիտությունների թեկնածու,

Ս. Հովսեփյան - «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»-ի ռեկտորի խորհրդական, տեխնիկական գիտությունների թեկնածու:

Քվեարկությանը չի մասնակցել՝ Ն. Տերյանը – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ:

Քվորում առկա է:

Օրակարգում ընդգրկված 1-ին հարցի վերաբերյալ խորհուրդը հեռակա քվեարկություն անցկացնելու միջոցով, ձայների «11» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի գործունեության տարեկան հաշվետվությունը:

Օրակարգում ընդգրկված 3-րդ հարցի վերաբերյալ խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների «12» կողմ «0» դեմ համամասնությամբ հաստատեց ՔՏՀԱ տեսչական մարմնի 2023 թվականի 4-րդ եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Գ. Սանոսյան**

Կառավարման խորհրդի քարտուղար՝ **Վ. Պոկացյան**